ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 51

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ, 25.4 ՔՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի N 48 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Եղիշ Ժորայի Հայրապետյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի 2-րդ փողոց 1-ին նրբանցք թիվ 2/1 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (կոդ 07-054-0036-0025) 1995-2000 թվականներին ինքնակամ կառուցված շինությունները և իրեն պատկանող 1000.0 քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին կից ինքնակամ զբաղեցրած 25.4 քմ հողամասի նկատմամբ ճանաչել սեփականության իրավունքը: Համայնքի կադաստրային քարտեզի, որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերի, տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ Եղիշ Ժորայի Հայրապետյանին պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի 2-րդ փողոց 1-ին նրբանցք թիվ 2/1 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում 1995-2000 թվականներին ինքնակամ կառուցվել է 8.81 քմ մակերեսով տնտեսական շինություն, 46.96 քմ մակերեսով ջրավազան, աստիճանավանդակ և 18.0 քմ մակերեսով պարիսպ: Իրեն պատկանող 1000.0 քմ հողամասին կից ինքնակամ զբաղեցվել է 25.4 քմ մակերեսով հողամաս:

Համաձայն Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի պահանջների, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9; 10; 11; 22.1 կետերի պահանջների, հիմք ընդունելով որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Եղիշ Ժորայի Հայրապետյանին պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի 2-րդ փողոց 1-ին նրբանցք թիվ 2/1 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, 25.4 քմ տարածքը ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում՝ ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Եղիշ Ժորայի Հայրապետյանին պատկանող 1995-2000 թվականներին կառուցված 8.81 քմ մակերեսով տնտեսական շինությունը, 46.96 քմ մակերեսով ջրավազանը, աստիճանավանդակը և 18.0 քմ մակերեսով պարիսպը համարել օրինական:
2. Հաշվի առնելով, որ շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար վճար չի գանձվում:

3. Քաղաքացի Եղիշ Ժորայի Հայրապետյանին պատկանող 1000.0 քմ հողամասին կից ավել օգտագործվող 25.4 քմ մակերեսով ինքնակամ զբաղեցրած հողամասի նկատմամբ՝ համաձայն Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների, ճանաչել նրա սեփականության իրավունքը:
4. ՈՒԺը կորցրած ճանաչել Պտղնի համայնքի ղեկավարի 2019 թվականի մայիսի 27-ի «ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ Գ. ՊՏՂՆԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 2/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԵՂԻՇ ԺՈՐԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ /ԾԱԾԿԱԳԻՐ 07-054-0036-0025/ 0.10254 ՀԱ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ» N 48 որոշումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2019 թ. հունիսի 10
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 52

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի պահանջների՝ ***որոշում եմ.***

1. 2019 թվականի հունիսի 13-ին ժամը 11^{00}-ին Պտղնիի համայնքապետարանում հրավիրել համայնքի ավագանու արտահերթ նիստ, հետևյալ օրակարգով՝

1) Դրամական օգնություն տրամադրելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

11-Jun-19

X _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2019 թ. հունիսի 10
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 53

ՀԵՐԱՋԻԿ ԴԱՐՂՈԿԱՍՅԱՆ-ՍԱՆԳԲԱՐԱՆԻԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով Հերաջիկ Բեդրոսի Դարղոկասյան-Սանգբարանիի դիմումը և լիցենզավորված ճարտարապետի կողմից գծված նախագծի առկայությունը՝ ***որոշում եմ.***

1. Հերաջիկ Բեդրոսի Դարղոկասյան-Սանգբարանիին տալ սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի 22-րդ փողոց թիվ 3 հասցեում գտնվող 0.092 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (սեփականության վկայական N 2544730, տրված 2008 թվականի սեպտեմբերի 29-ին, ծածկագիր 07-054-0140-0036) պահեստային տարածքի կառուցման աշխատանքների շինարարության թույլտվություն:
2. Հանձնարարել Հերաջիկ Բեդրոսի Դարղոկասյան-Սանգբարանիին շինարարական աշխատանքներն իրականացնել քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան:
3. Շինարարական աշխատանքները սկսել տեղական տուրքը վճարելուց հետո:
4. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ եռօրյա ժամկետում համայնքապետարան ներկայացնել տեղեկանք Ձև N 5-ը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

18-Jun-19

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2019 թ. հունիսի 18
գ.Պտղնի